Ինչո՞ւ պէտք է Զուիկ եւ Անուշվռամ, Արծրունի քոյրեր մէկը Մամիկոնեան, միւսը՝ մեծ բդեշխի տիկին այնքան մայրական խնամք տածէին մի գեղջուկ տղայի:

Նոր մեկնութիւնը նոր դժուարութիւններ է յարուցանում:

Հաւանականն այն է, որ խօսքը աշխարհային ազատութեան մասին չէ, այլ հոգեւոր: Կրօնաւորի, ուրեմն եւ Ղազարի աչքում, բոլոր աշխարհականները ծառայ են, ազատ թէ գեղջուկ: Իսկական ազատը նա է, որ «ազատեալ է ի Քրիստոս», փրկուած է «ի ծառայութենէ աշխարհիս»: Այդ ազատութիւնն երաշխաւորում է պարեգօտը, հոգեւոր կոչումը: Աղան, որի մօտ «սնեալ եւ ուսեալ է» Ղազարը, տալով նրան եւ պարեգօտ, դառնում է «ազատութեան առիթ:»

Այսպիսով թեթեւացրած կը լինի Ղազարի վիճակը: Աշխարհից փրկելը աւելի դիւրին է քան «ճորտութիւնից:»

Դժուար թէ կարելի է ողջունել Խորենացու «փախչողք ի ծառանդութենէ» խօսքի նորալուր մեկնութիւնը: Ծառանդութիւն իբրեւ թէ չինականների հողարաժին է այնպիսի ծանր պայմանների ներքոյ, որ նրանք չէին ուզում մշակել եւ դերադասում էին փախչելով ազատուել աշխատանքից:

Նախ մեր պատմահայրը չինականների մասին չէ խօսում, այլ ժողովրդականների, որոնց անուանում է «վէնք, ստահակք, մեծախօսք, անվաստակք, արբեցողք, վնասակարք:» Եթէ ոչ վերջին երեք ածականները գոնէ առաջին երեքը ոչ մի կերպ չեն յարմարում ճնշուած ճորտերին: Խորենացու ողբը որպէս մի քերթուած վատ աղբիւր է պատմութեան, եթէ է: Վարդապետների, կրօնաւորների, վիճակաւորների, աշակերտների, ժողովականների, զօրականների, իշխանների եւ դատաւորներին վերագրած Աղամայ եօթ մեղքերը նոյնչափ ստոյգ են որքան «տարերց փոփոխել զբնութիւնս իւրեանց:» Եթէ մի բան կայ, որ վերաբերում հայ կեանքին այդ է «յօտարութիւն վտարումն ազատաց եւ անթիւ նեղութիւնք ռամկաց:»

Այս տողի հեղինակը չի կարող ամբաստանել որ ռամիկը փախչում է իր հողից: Աւելի բնական է ըմբռնել ժառանգութիւնը սովորական իմաստով, այսինքն որ «ժողովրդականք վէնք, ստահակք» փախչում էին հոգեւոր կոչումից, չէին ուզում եկեղեցուն ծառայել:

Պ. Մանանդեանի առարկութիւնը՝ թէ եկեղեցականութիւնը արտօնեալ վիճակ է, ուստի անհեթեթ կը լինի կարծել որ նրանից խուսափում էր ժողովուրդը, անարժէք է: Արտօնութեան կից կայ եւ ծանր պատասխանատուութիւն եւ պահանջ: Ահա Պաղ եւ Աթանագենէս թողնում են «հոգեւոր պատիւը,» եւ մերժելով «զանձինս իւրեանց ի ժառանգութենէ Աստուծոյ»: Ողբի իմաստն հէնց այն է որ մարդիկ այնքան փչացել են, որ հրաժարւում են անգամ հոգեւոր բարձր կոչումից: Ճարտասանութիւն կամ դառնութիւն լցուած սրտի:

Պ. Մանանդեանի փաստերը, խօսենք մեղմ, այնքան փխրուն են, որ ոչինչ չեն աւելացնում, ոչինչ հիւթ չեն բերում այն լոկ տեսական թելադրութեան թէ հաւանական է որ Հայաստանում եւս ճորտանման վիճակ եղած լինի:

Պ. Մանանդեան սկսում է խուզել այդ հաւանականութիւնը, ասելով, որ ճորտութիւնը համատարած երեւոյթ չէ եղել ոչ էլ ամէն տեղ միակերպ եւ նոյնանման, այլ որ զանազան վայրեր ունեցել են իրենց առանձնայատկութիւնները: Պատրաստ է անգամ թոյլ տալ որ ճորտերի կից լինէին եւ ազատ գիւղացիութեան մնացորդներ:

Առանձնայատկութիւնների գոյութիւնն ապացուցանելու համար վկայութեան է կոչւում Խորենացին, հակառակ իր կամքին: «Գիւղից եւ դաւառաց եւս ի իւրաքանչիւր տանց առանձնականութեանց եւ հանուրց հակառակութեանց եւ դաշանց այժմ առ մեզ դատին անբաւ զրուցաց մատեանք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պայազատութիւն:» Որոնելի առանձնայատկութիւնները Պ. Մանանդեան գտնում է ընդգծածս առանձնականութեանց մէջ:

Սակայն Պ. Մանանդեան, ինչպէս միշտ, հաշիւ չէ տալիս իր մեկնութեան հետեւանքի մասին: Ցիրաւի, գիւղերը, դաւառները եւ տները ինչու պիտի վէճի բռնուէին իրենց առանձնայատկութիւնների առթիւ: Առանձնայատկութիւն ասածդ բնական խտրոյ է, մի տեսակ noli me tangere, որ ընդհարման առիթ